

ՓՈԼ ԼԱՆԺԸԻԷՆ

ՖԻՆԱՆՍԻ ՄԵԾ ԳԻՏՆԱԿԱՆԸ

Ահաւասարի քսաներորդ դարու ազնուական, գիտնական ու ժողովրդական ղեմքերէն մին, որուն կեանքի ու գիտական, գործունէութեան ու գիւտերուն հիմը, ձգտումը եղած է « Բարութիւն, Արդարութիւն ճիշդ, աղքատիկ յարկի մը տակ ծնած է Փարիզ, Մոնմարթրի մէջ 1872ին: Անձուկ միջոցներով ու ղփուարին պայմաններու մէջ պատանեկան կրթութիւնը և ուսումը բնագիտութեան կրթութիւնը (Ecole de physique et de chimie) մէջ ստանալէ ետք, քսան տարեկան հասակին կը մտնէ Էքզոլ Նորմալ Սիւրբիօր: Փօլ Լանժուէն ինքզինք կը նուիրէ գիտութեան. ան՝ ընկերային կեանքի կնճռոտ խորհուրդին մէջ կանուխէն կը թափանցէ ու կը ջանայ գիտութիւնն ու գիւտերը յատկացնել մարդկութեան յառաջադիմութեան և գիտութիւնը բարւոյն հետ զօղելով՝ ընկեանաւ բնագէտ փիլիսոփային բարձր գաղափարականը: 1897ին Վիլ տը Փարիզինք Անգլիա կը ճամբէ՝ Գաւէնտիշի տարբալուծարներն մէջ Ժ. Թոմսընի ձեռքին տակ աշխատելու և փորձուելու համար: Տարի մը յետոյ երբ երիտասարդ գիտունը Ֆրանսա կը դառնայ՝ նախ Էքզոլ Նորմալի տիւրդոսով (1898-1902) կ'աշխատի Ուսուցչապետ կ'անուանուի Քոլէժ տը Ֆրանս, և երբ 1904ին Փիէռ Քիւռի Սորպոնի ուսուցչապետ կը կարգուի, Փ. Լանժուէն

(¹) Պրաունշ (Brown) ժ.Ն. գարու աճյալ. բոխշ. մշն է. աճ սկզբունքը կը զնէ թէ՛ զգործարանակաճն ո՛ր է է մարմին աճկոյունը, շարժուն է, որով մահուան պատճառը

անոր տեղը կ'անցնի իր նախկին վարժա-
րանին մէջ և 1925ին ալ Տնօրէնը կ'ըլլայ
միեւնոյն Հաստատութեան:

Փ. Լանժուէն զոյգ Քրիստիներէն ոչ ինչ նուազ միջազգային դէմք մըն է, անոնց հետ և անոնց պէս թափանցելով գիտութեան անհատնում բովերու գաղտնիքնե-
րուն մէջ, անդուլ պրպտումներով՝ տընկցաւ միշտ նորանոր յայտնութիւններ ընելու համար: Բոլոր կեանքը գիտութեան ու բարութեան հիւսուածք մը եղաւ: Սուրբ գիտութիւնը Փ. Լանժուէնին կը պարտի այլեւայլ նոր յայտնութիւններ: Ռէօնիթ-
կենեան ճառագայթներու վրայ Պրանսացի գիտունը կարելոր ուսումնասիրութիւններ ըրաւ, ինչպէս նաեւ կազերու շարժումնե-
րու, կազերու և մթնոլորտին մէջ իօններու գոյութեան և անոնց յատկութիւններու մասին, մագնիսականութեան վրայ, յա-
րաքրականութեան դրոշմակէ վրայ (théo-
rie de la relativité), պրատնական (1)
շարժումներու, գործարանական մարմին-
ներուն մէջ գրգռականութեան դրոշմակէ
(théorie de l'incitabilité) վրայ: Տա-
րիներով աշխատեցաւ էլեքթրօ-մակնէթիքի
և էլեքթրօններու վրայ նորանոր յայտնու-
թիւններ ընելով, և իր այս աշխատութիւնը
շարունակեց մինչեւ 1934:

Նախորդ մեծ պատերազմին փ. Լան-
ժըն էր գիտնականի կարողությունը տրա-
մադրած էր հայրենիքի դատին: Այն հնա-
րեց զգայուն գործիք մը՝ (ultra-sons)
թիւնը կը մատնէր, ասով շատ մեծ ծա-
ռայութիւն մատուցց, և համաձայնական
անոր այս հրաշալի գիտութ: Այնչէթայն մեծ
գիտնականին յայտնութիւնները և սկզբ-
բունքը Զորանսայի մէջ ծանօթացուց:

կրկին է. գրգռիչ գործողությունը դադարում է, և գրգռականությունը շփումը (l'extinction de l'incitabilité).

ԱՐՏԱԻԱԶԴ Գ.

the

ՀՐՈՄԷԱԿԱՆ ԴԱԽԱՋԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Շարք. տես «Բարգիս» 1947, էջ 14)

f

կրտստէն Վերջ, Անտոնիոս Եռապետը
Ս. Լ. Կ. Բ. Էկաւ 36-ին (ն. Ք.):

Արեւելք եկաւ 36-ին (ս. 17):
Ըստ ԿարաՀաուզենի 100,000 հոգիներէ
բաղկացած բանակով մը Անտոնիոս քալե-
լաւ Պարթեաաց դէմ: Արտաւազդ
Մարաց ու Պարթեաաց դէմ: Արտաւազդ
անոր զօրւորագոյն դաշնակիցն էր: Ինչ-
պէս երբեքն Կրասսին, Անտոնիոսին աւ-
գեղեցիկ խորհուրդներ տուաւ Արտաւազդ
թագաւորը, ու անձնուիրաբար խոստացաւ
տրամադրել իբր սկզբնաւորական օժանդա-
կութիւն 6,000 ընտիր հեծեալ ու 7,000
լաոճ հետեւակ Հայ զինուորներ:

Պլուսաբքու, Արտաւազդի բերած հե-
ծեալներուն թիւը 16,000 կը հաշուէ փո-
խանակ 6,000ի, որ ինքնին զօրաւոր փաստ
մըն է թէ Արտաւազդ իրապէս դաշնակցած
է իր անկախ պետութեան:

Հռոմի պետության
Հռոմեացի թուրքերը եւս
Արտաւազը Անտոնիոսին դաշնակից կը
նշանակէ իր «Parthia» գիրքին մէջ, ուր
էջ 207 կ'ըսէ. «Արտաւազը ձմեռուան եղաւ
նակին յարած էր (Հռոմի) կողմը ու խոս-
տացած էր տալ 7,000 հետեւակ ու 6,000
ծիաւոր»:

Անտոնիոս ալ, Կրատոսի նման, սխալ
ուղղութեան հետեւեցաւ, ու առանց Հայոց
թագաւորին խորհուրդին անսալու, բանակն
երկուքի բաժնեց, պատերազմական մեքե-
նաները ու մեծագոյն պաշարը Ուպլիոս
Ստատիոսին յանձնեց, ու ինք առանձին
յորձակեցաւ Մարաստանի Փրատտա մոյ-
սաքաղաքին վրայ (Տես Ամիանոս):

Պարթևներու Հրահատ Դ. Թագաւորը
և Մարաց Արտաւազդ Թագաւորը յանկարծ

Փ. Լանժուէնին գիտական զբոլթիւն-
նեբլը հաճոյքով կը կարդացուին. անոնք
յստակ, հակիրճ ու անսեթեւեթ են, ձգել
ոյժ և ժպիտ մ'ունին. հոգին ու միտքը
կրկնակի գոհացում կը գտնեն անոնց
հմտալից ու սարգ ոճէն. անոնց մէջ կ'ար-
տացուայ միանգամայն փիլիսոփայի, գի-
տունի՝ բարձր հոգւոյ, համայնական մտքի
կորովն ու նկարագիրը: Դրագէտի զըշին
մէկ գեղեցիկ նմոյշն է բնագէտ Հանրի
Փուանքարէի մտտին տնոր գիտական մէկ
ստուգնասիրութիւնը՝ որ լոյս տեսած է
«le Mois» հանդէսին մէջ:

Վերջին պատերազմի ընթացքին մեծ
գիտնականը հաղիւ հազ կ'ազատի Գեր-
մանայիներու ազգայնամոլ ու ցեղատեսց
կատաղութենէն՝ շնորհիւ Ֆրանսացի ուսա-
նողներու համակրական ցոյցերուն և գիտ-
նականներու յաճախակի դիմումներուն :
Ան գաղտնի Զուիցերլա կ'ապաստանի, ու
կը մնայ հոն մինչեւ Գերմանացիներուն
Փարիզէն քաշուիլը : Փարիզ վերադարձին
նորէն աշխատանքի կը լծուի նուիրական
պարտականութեան մը ներշնչումով, վասն
զի հայրենիքը իր արդարակոորով գործու-
նէութեան պէտքը ունէր : Դժբախտաբար
Հատ կարճատեւ կ'ըլլայ այս անգամ հայ-
րենասէր գիտունին գործունէութեան ջրը-
ջանը . սոն՝ յոգնած, սպառած ֆիզիքսպէս,
արդարութեան սնանկացումը տեսնելով,
կը զաղրի տանջուելէ, սնցեալ դեկտեմ-
բերի 21ին, իր պարզ ու վռնմ կտալին
մեղեդին մըմնջելով « կը սիրեմ զձեզ...
Բարութիւն... Արդարութիւն... » :

ժ. Ռիշարդ Պլոք, Փ. Լանժելսին նախ
կին երախտագէտ աշակերտը, շատ զգայուն
կերպով դուրս կը ցատկեցնէ հայրենիքի
ու մարդկութեան դատին նուիրուած ներ-
հուն զիտնականի, ժողովրդի մեծ զաւկին
ազնիւ ու վեհանձն հոգին. անոր մահով
ոչ միայն Ֆրանսա, այլ նաեւ մարդկու-
թիւնը կը կորսնցնէ տաղանդաւոր մեծ
զիտուն մը:

2. 8. 6.

յարձակում գործեցին: Անոնք մեր Արտա-
ւազդը հետո գտնելով՝ 10,000 Հռովմայեցի
զինուորներու հետ սպաննեցին Ստատիրոսը
ու աւելի մեծ թիւով ալ գերիներ առնելով՝
գրեթէ Հռովմական բոլոր պատերազմական
մեքենաները այրեցին ու հարուստ աւարով
վերադարձան...:

Այս լուրը կայծակի նման տարածուեցաւ
և երբ հասաւ Անտոնիոսի ահաւջը, որ
Մարաստան կը գտնուէր, սաստիկ վախցաւ
ու ամօթալի նահանջի գիւնեց մեծագոյն կո-
րուստներով: Ան հազիւ կարողացաւ իր մնա-
ցորդ բանակով ապաստանիլ Հռոմի դաշ-
նակից ՀԱՅԱՍՏԱՆ երկիրը, հոն քիչ մը
հանգստանալու ու կազդուրուելու համար:
Անտոնիոս շատ կը վախնար որ մի գուցէ
ինքն ալ Կրասոսի նման պարտութեան
մատնուէր, ու մի գուցէ Կրասոսի նման
իր գլուխն ալ գերասաններու ձեռք խաղա-
լիք ըլլար:

Արտաւազդ Անտոնիոս եռապետին ընկերն
էր ու Հռովմայեցւոց բարեկամը: Բայց,
աւանդ, որ Անտոնիոս եւս քիչ վերջ Կրասոսի
ըրածը պիտի կրկնէր...:

Գիտն Կասիոս ու Պլուտարքոս կը պատմեն
որ երբ Արտաւազդ այս մեծ պարտութիւնը
տեսաւ, ստիպուեցաւ իր զօրքով իր երկիրը
քաշուիլ ուր պատրաստութիւններ տեսաւ՝
յոգնած ու գրեթէ փճացած Հռովմական
բանակը հերասիբելու ու դարմանելու հա-
մար: Արդէն Անտոնիոս ալ սկսած էր Ար-
տաւազդին նման տակաւ առ տակաւ նա-
հանջել գէպի Հայաստան: Ի՞նչպէս, ուրեմն,
Արտաւազդ կրնար մեղադրելի ըլլալ:

Բօլինսոն Անգղիացին դարձեալ մեզի
օգնութեան կու գայ, երբ իր «Parthia»-ին
208-209 էջերուն մէջ կ'ըսէ.

«Հայոց թագաւորը սիրով ընդունեցաւ
Անտոնիոսն ու անոր օգնեց իր լաւագոյն
հեծեալներով ու հետեակներով, որոնք իր
ընտրեալներէն էին»:

Եթէ Արտաւազդ Անտոնիոսին թշնամի և
պարթեւներու բարեկամ եղած ըլլար, կըր-
նար հանգիստ կերպով Հայաստան վերա-

դառնալ, կամ Հռովմական ջախջախում
բանակը դիւրաւ հալածել իր սահմաններէն:
Ո՞վ կրնար արդիւել զայն:

Արտաւազդ, սակայն զէնքով օգնութեան
փութաց Անտոնիոսին, ու անոր կորստեան
մօտ եղող բանակը Հայաստան ընդունեցաւ
գրկարաց, և անոնց համար ոչ գրամ ու
ոչ ուտեստեղէն խնայեց: Մինչդեռ Անտո-
նիոս, այդ մեղի Հռովմայեցին, ձմեռուան
ցուրտին ու բուքին իր պարտականութիւն-
ները մոռցած՝ փութաց գէպի Սիգոն, ուր
իրեն կը սպասէր իր սիրուհին... այսինքն,
Եգիպտոսի Կղէոպատրա թագուհին... որ-
պէսզի անոր գրկին մէջ նետուելով՝ իր
պարտութեան մուրը նետէր Արտաւազդի
վրայ:

Անտոնիոս այնքան վատասիրտ ու ստախօս
էր, որ Սիգոնէն պատգամաւորներ զրկեց
Հռոմ ու իր կարծեցեալ յաջողութիւննե-
րուն աւետիսը իմացուց ծերակոյտին: Մինչ-
դեռ... իրականին մէջ, իր պարտուած
բանակին վերաւորեալները ու ծանրօրէն
վնասուածները Հայաստանի մէջ կը խնամ-
ուէին Հայոց վեհանձն թագաւորին հրա-
մանով:

Արտաւազդի բարի նկարագրին գէմ
նիւթուած այս շատ ստորին զրպարտու-
թիւնները, ղժբախտաբար Պլուտարքոսի
միջոցաւ ընդհանրացան:

Ո՞չ մէկ փաստ կայ Արտաւազդի դաւա-
ճան ըլլալուն մասին: Կարահառուգէն կը
գրէ թէ «Հայուն կողմէ մատնութեան և
ոչ իսկ հետքը կայ»: (Տես I, էջ 294): Իսկ
էջ 364) գործին մէջ կը չեղաէ որ «Պատե-
րազմի ծրագրին պատասխանատուն ոչ թէ
Արտաւազդն էր այլ ինքը՝ Անտոնիոսը»:
Կոլտշմիտ եւս Արտաւազդին ի նպաստ
Iran»-ի մէջ կ'ըսէ. «Այս ամբաստանու-
թիւնը անմիտ ու քիչ ապացուցանելի է»:
(Տես էջ 107):

Մոմէն իր գիրքին մէջ գեռ կ'աւելցնէ.
«Անտոնիոսի արկածին և Փրատապի պա-

չարման ձախողելուն պատճառը ՀԱՅԸ 21»
(տես իր գործը Ե. էջ 367-368):

Անտոնիոսի արշաւանքներուն ու անոր
հետ Հայաստանի բռնած դիրքին վրայ գրած
էր Կ. Գելլիոս, որուն գործը սակայն կոր-
սուած է: Այս խնդրին վրայ գրող միւս
պատմիչները (Ստրաբոն, Պլուտարքոս, և
այլն) անկէ քաղած են իրենց նիւթը: Կ.
Գելլիոս իր պատանեկութեան տարիքէն Ան-
տոնիոսին ամենասիրելի բարեկամը եղած
էր ու երբ մեծցած էր՝ Անտոնիոս գտնելի
զինակից ըլլած էր ու բարձրացուցած մեծ
պատիւներու: Ուրեմն, եթէ նկատի առ-
նենք Գելլիոսի ու Անտոնիոսի բարեկա-
մական կապերը, դիւրաւ կրնանք հաս-
կընալ թէ ինչ արժէք կրնան ունենալ իր
գործերը: Որովհետեւ, Գելլիոս, որ աղ-
բիւրը եղած է կարգ մը պատմիչներու, եթէ
ուրիշներու գրածին նման ինք եւս աշխա-
տած էր Հայոց Արտաւազդը ներկայացնել
իւր դաւաճան, այդ ըրած էր պարզապէս
Անտոնիոսը պաշտպանելու հարկադրանքին
տակ: Այս մասին շատ իրաւամբ Մոմէն
կը գրէ. «Գելլիոսի աւանդանքները շատ
ողորմելի փորձեր են յաղթուած զօրավորը
(Անտոնիոսը) արդարացնելու համար»: Ան-
տոնիոս եռապետին պարտութեան գլխաւոր
մեծ պատճառներն էին. (ա) Արտաւազդին
խորհուրդներուն շանտալը. (բ) իր պատե-
րազմական թերի պատրաստութիւնները.
(գ) Հռովմական բանակի պարէնին ու ըմ-
պելիքին պակասը. (դ) թշնամիին արձակած
անվերջ ու կարկանդակ նետերը:

Բայց Անտոնիոսի փափաքը մէկ էր միայն.
«Մատնիչ» մը փնտռել. այլապէս ի՞նչպէս
պիտի կարենար պարսկել իր ամօթալի
պարտութիւնը: Ու այս գաղափարով իւր
տոնիոս նախ Կապադովկիոյ թագաւորը իւր
մատնիչ գլխատել տուաւ (Տես Մոմէն):
Ապա սպաննել տուաւ Եգիպտոսի Յամնիքոս
թագաւորը՝ ըստ Կասիոս Գիոնի: Հիմա ալ
պէտք էր Արտաւազդ «մատնիչ»-ին հաշիւը
մաքել:

Անտոնիոս 35ին (ն. Գ.) Կղէոպատրայի

քով մնաց ու նոյն տարին որոշեց պարթե-
ւական երկրորդ արշաւանք մը պատրաստել
ու պատժել նախ Հայոց Արտաւազդ թա-
գաւորը: Մինչ Անտոնիոս կը պնդէր Ար-
տաւազդին «մատնութեան» վրայ, ինք լաւ
գիտէր թէ Արտաւազդ միշտ փափաքած էր
օգնել Հռովմայեցւոց՝ հակառակ որ Հռոմի
կեդրոնական եռապետ Հոկտաւիանոս (ա-
պագայ Օգոստոս կայսրը) իր գաղտնի նա-
մակներով Արտաւազդը կը գրգռէր Անտո-
նիոսին դէմ, ու միշտ կը թելադրէր որ
չօգնէր Անտոնիոսին: (Տես Գիոն Կասիոս,
49 ու 41):

Անտոնիոս նենգութեամբ Արտաւազդը
իր բարեկամ Աղեքսանդրի հրաւիրեց,
Պարթեւաց գէմ խորհրդակցելու համար,
որպէսզի այս ձեւով զինքը ձերբակալէր:
Արտաւազդ Անտոնիոսին չվստահելով մեր-
ժեց երթալ:

Երկրորդ անգամ Անտոնիոս դարձեալ
Արտաւազդը Աղեքսանդրի հրաւիրեց, այս
անգամ իւր թէ Արտաւազդին դուստրը իր
անգամ իր զօրքն կնութեան խնդրելու
Աղեքսանդր որդւոյն կնութեան խնդրելու
համար: Արտաւազդ դարձեալ չվստահեցաւ
Անտոնիոսին: Անտոնիոս վերջին փորձ մ'ալ
ըրաւ 34ի գարնան: Յանկարծ մեծ բանակով
գնաց Փոքր Հայքի նիկոպոլիս քաղաքը ու
անկէ իր սիրելի բարեկամը ու պատմագիրը
Գելլիոսը զրկեց Արտաւազդին մօտ՝ յայտ-
նելու համար թէ Պարթեւաց գէմ պատե-
րազմիւ համար պէտք ունէր Արտաւազդին
խորհուրդներուն: Բայց երբ Արտաւազդ
կրկին մերժեց՝ Անտոնիոս զէնքով արշաւեց
Հայաստան... (տես Ապպիանոս):

Արտաւազդը նենգութեամբ ձերբակալե-
լու մասին, Բօլինսոն հետեւեալ կը գրէ
իր «Parthia»-ին մէջ. «Անտոնիոս երբ այլ-
եւայլ ճիգերով ջանաց որոսաւ Արտաւազդը,
ինչ որ 35ին մեծագոյն մասը գրաւեց ու
անյաջող եղաւ՝ 34ի գարնան մտաւ Հայաս-
տան» (էջ 215):

Անտոնիոս Արտաւազդին մօտենալով
կանգ առաւ ու հրաւիրեց զայն Հռովմական
ձամբարը գալու: Ամէն միջոցի դիմեց հրա-

պուրելու, կէս մը բարեկամ թագաւորներու միջնորդութեամբ՝ կէս մը իր բոլորովին բարեկամական նամակներով՝ վերջապէս կարողացաւ Արտաւազդը համոզել:

Երբ Արտաւազդ տեսաւ որ Հռովմի «բարեկամ» բանակը կը բախէր իր մայրաքաղաքին դռները ու երբ իմացաւ որ Մարաստանի անուանակից Արտաւազդ թագաւորը Պարթեւները լքելով միացած էր Անտոնիոսին, վերջապէս անոր մօտ գնաց ճարհատ... Անտոնիոս բարեկամական երեւոյթի տակ ողջագործեց Արտաւազդը ու վրիժառութեամբ իսկոյն ձերբակալեց Հայոց բանաստեղծ՝ բայց դժբախտ թագաւորը (տես Տակիտոս):

Հազիւ թէ Արտաւազդ ձերբակալուեցաւ, ընչաքաղց Հռովմայեցիները Հայաստանը աւարի մատնեցին, ինչպէս որ կը վկայէ Տակիտոս:

Հայերը շուարած իսկոյն թագաւոր հռչակեցին Արտաւազդին որդին, Արտաշէսը, որ հազիւ կարողացած էր ազատիլ Հռովմայեցիներուն ճիրաններէն. ճիշտ այսպէս կը վկայեն Գիոն Կասիոս, Յովսէպոս ու Բօլինոս:

Յովսէպոս կ'ըսէ որ Արտաշէս նախ գերի տարուած էր Ալեքսանդրիա՝ բայց յետոյ փախչելով Հայաստան եկած էր ուր Հայերը զինքը իսկոյն թագաւոր պսակեցին: Բօլինոսն կ'ըսէ, որ Արտաշէս թագաւոր հռչակուեցաւ հօրը սենեակին մէջ:

Հռովմայեցիք անպաշտպան մնացած Հայաստանը բոլորովին կողոպտեցին, նոյնիսկ չինայեցի Անահիտ Աստուածուհիին երեւելի մեհեանին, ու անոր ոսկեծոյլ թանկարժէք խոշոր արծանը փշրելով՝ մետաղը իրենց մէջ բաժնեցին, ինչպէս կը վկայեն Պլինիոս, Կարտհագոզէն ու Մոմէն:

Արտաշէս ջանաց սպաննել տալ վատասիրտ Անտոնիոսը՝ բայց յանկարծ պաշարուեցաւ, ու հազիւ կրցաւ ապաստանիլ պարթեւ թագաւորին արքունիքը՝ ուր սիրով ընդունուեցաւ Հրաշատ Գ. թագաւորէն:

Պարթեւները աւելի ազնիւ գտնուեցան

քան «բարեկամ» ու «քաղաքակիրթ» ու «դաշնակից» Հռովմի այլասերած եռապետը:

Անտոնիոս ստորնարար ոսկի ու արծաթ շղթաներով կապել տուաւ Արտաւազդը, թագուհին ու իր որդիները, ու հետը առած առատ գանձեր՝ Ալեքսանդրիա մեկնեցաւ իր սիրելի թագուհի՝ Կլէոպատրային մօտ՝ Հայաստան ձգելով Հռովմայեցի վաշտեր (տես Գիոն Կասիոս):

Մարաց անուանակից Արտաւազդ թագաւորին, Անտոնիոս ընծայ տուաւ Հայաստանի Սիմիակ գաւառը (Սորաբոն):

Անտոնիոս ու Կլէոպատրա շատ չարչարեցին Հայոց թագաւորը ու իր ընտանիքը: Անտոնիոս զիբեք բերել տուաւ հասարակաց հանդիսավայրը՝ կիմնադրին, ուր իր սիրուհին՝ Կլէոպատրա նստած էր ոսկեղէն գահին վրայ: Անտոնիոս գանազան միջոցներով, ազատութեան խոստումներով ջանաց հայ գերիները պարտադրել որ հպատակու թեան ու յարգանքի բռուեր արտայայտեն և Կլէոպատրան անպայման անուանեն «թագուհիներու թագուհի»: Բայց Արտաւազդ հակառակ որ ոսկի ու արծաթ շղթաներով կապուած էր, յիշեց որ ինք եւս «Արքայից Արքայ» մըն էր, ու որդին էր մեծագոյն «Արքայից Արքային ու Աստուծոյ» Մեծն Տիգրանին: Արտաւազդ չհրապուրուեցաւ Անտոնիոսի խոստումներէն, ու երբեք յարգանքի ցոյց չըրաւ Կլէոպատրային, հաւատարիմ մնալով Արտաշէսեան խրոխտ ոգիին:

Ոչ Արտաւազդ, ոչ իր թագուհին ու ոչ իր արքայազուները, ոչ ալ հայ ազնուականները աղաչանքի բառ կամ յարգանքի փոքրագոյն նշոյլ մը ցոյց տուին, այլ Կլէոպատրան լոկ իր անուանով կոչեցին, ու ոչ ալ սովորական ծերագործութիւնն ըրին:

Հայոց թագաւորին ու անոր վեհ ընտանիքին այս հպարտ կեցուածքը պատճառեղաւ, որ Հայ թագաւորական ընտանիքը ու հայ իշխանները ենթարկուէին դառն նեղութիւններու և տանջանքներու, մինչեւ

որ Ալտէոնի ճակատամարտը (ծովամարտը) տեղի ունեցաւ 30ին (տես Գիոն Կասիոս ու Կարտհագոզէն):

Ալտէոնի ճակատամարտին մէջ, Անտոնիոս ու Կլէոպատրա չարաչար պարտուեցան Հոկտաւիանոսէն: Այս մեծ եռապետը, իր այս կարեւոր պատերազմին իր 4-րդ պատճառ ցոյց տուած էր Արտաւազդին հանդէպ ցոյց տրուած ստորին նենգութիւնները ու դաւաճանական վերաբերումը (տես Գիոն Կասիոս):

Երբ Անտոնիոս ու Կլէոպատրա պատեւազօր կորսնցուցին, իսկոյն Ալեքսանդրիա փախան: Հոն իմացան, որ Հոկտաւիանոս, Հռոմի ժողովրդեան փափաքին համաձայն, կ'ուզէր Արտաւազդը ազատ արձակել: Կլէոպատրա այս իմանալով շտապեց գլխատել տալ Արտաւազդ թագաւորը, որուն գլուխը նուէր դրկեց անոր թշնամիին՝ Մարաց համառուն Արտաւազդ թագաւորին, որպէսզի իրեն օգնական նոր գունդեր ուղարկէր:

Այս դաւաճանական գլխատումին դրդապատճառը շատ մը պատմագէտներ կ'ընդունին: Թէ Գիոն, թէ Սորաբոն ու Տակիտոս, թէ Վելլիոս Պատերգուոս, ու թէ Յովսէպոս, Պլուտարքոս և Կարտհագոզէն այս դրուժան արարքը պատմելով՝ ցոյց կու տան մեր Արտաւազդի թշնամիներուն այլասերած նկարագիրը ու ստոր անհատականութիւնը:

Հռոմի ժողովուրդը Անտոնիոսի այս դաւաճանութիւնը «անջնջելի արատ» ու «ոճիր» համարեցաւ ու այսպէս ալ գրեց Հռովմայեցի նշանաւոր պատմագէտ Տակիտոսը:

Այսպէս անհետացաւ Հայոց պատմութեան ամէնէն համակրելի դէմքերէն մէկը, որ դժբախտութիւնն ունեցաւ հանդիպելու որ այլասերած ու անամօթ Անտոնիոսին, որ իր յաղթութիւնը արձանագրել տուաւ իր կոխել տուած դրամներուն վրայ: Արծաթէ դրամի մը վրայ կ'երեւին Անտոնիոսի ու Կլէոպատրայի զոյգ գլուխները ինչպէս նաեւ Հայաստանի արքունի թագը, նետ ու աղեղ խոնարհած վիճակի մէջ, ու հետեւեալ լատիներէն արձանագրութիւնը:

«Անտոնիոս, Հայաստան Նուաճեալ, Կլէոպատրա, թագուհի թագաւորաց որդւոց թագաւորաց»:

Իրենց այս յաղթանակի առիթով կոխուած ուրիշ դրամի մը վրայ կ'երեւին յաղթականը և գերիներ, Գայլ ու Երկուորեակ և յունարէն «Արմենիա» բառը:

Արտաւազդ անմոռանալի թագաւորը զոհն է Անտոնիոսի շնութիւններուն ու դաւաճանական խարէութիւններուն:

ՆՈՒՊԱՐ ՄԱԳՍՈՒՏԵԱՆ

Նիկոսիա
դիպրոս կղզի:

ՎԱՂՈՒԱՆ ԵՐԳԸ

Ես գովքն ըրի Անցեալին, անոր վազքն ուրընթաց,
Անկումներուն անոր բիւր, թընչքներուն վերջայեաց,
Որպէս խորհուրդ քաղեցի իմաստն անոր ուղղութեան
Եւ յանձնեցի Այսօրուան կեանքի իբրեւ նոր ճամբան:

Ես երգեցի հուր սիրով մեր օրերու երգը վեհ
Պայքարները մոլեգին, արշաւները զերդ հրդեհ,
Ու ես դարձայ լուսաձայն գալիքներու մարդարէն,
Երկինքներէն խըլեցի փառքի արեւն հրեղէն:

Դժգոհ մընաց իմ հոգիս, սակայն, փառքին հետ վըտիտ,
Ո՛հ, օրերս իմ արեւոտ՝ տես կը դառնան անժըպիտ,
Ձի որքան ալ երգերն իմ եղան յոյսի ոսկի ջահ՝
Բայց ըստեղծել չըկրցայ երգը վաղուայ, մեծ, անմահ:

ՅԱԿՈԲ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Ֆիլատիլիա, 10 Յունուար 1944